

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա վիճակի և կատարված աշխատանքների վերաբերյալ

2013թ. մարզում կատարված ուսումնասիրությունների արդյունքում թարմացվել է ոլորտի տեղեկատվական շտեմարանը, որի տվյալները նպաստում են աշխատանքներին որոշակի ուղղվածություն տալու համար:

Ըստ ՀՀ ԱՎԾ Վայոց ձորի մարզային ծառայության 2013 թվականի հունվարի 1-ի տվյալների մարզի մշտական բնակչությունը կազմում է 58 784 մարդ, որից տղամարդ՝ 29 250, կին՝ 29 534, երեխաները կազմում են ընդհանուր ազգաբնակչության 27%-ը կամ 16 180 երեխա, որից տղա՝ 8346, աղջիկ՝ 7834: Համայնքներում կատարված ուսումնասիրության արդյունքներով մարզում հաշվառված է 17 132 ընտանիք, որից բազմանդամ՝ / 7 և ավելի շունչ / 604, բազմազավակ՝ / 4 և ավելի երեխա / 173:

2013 թվականին մարզում ծնվել 605 երեխա և մահացել 439 մարդ, բնական աճը կազմում է 166 մարդ:

Բազմազավակ ընտանիքները հիմնականում օգտվում են օրենքով սահմանված պետական սոցիալական երաշխիքներից: Մարզում հաշվառված է մանկուց հաշմանդամ կամ հաշմանդամ դարձած 143 երեխաներ, որոնց իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, որպես կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել է կարիքի / կրթական, սոցիալական, իրավական / գնահատում: Այդ երեխաներից 98-ը ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Համաձայն « Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին » ՀՀ օրենքի 14 և 15 հոդվածների պահանջների նշված երեխաներից 88-ի համար տարբերակված ուսուցում է կազմակերպվում մարզի 3 հանրակրթական դպրոցներում ,մասնագիտացված բժշկական կենտրոնի ախտորոշման թերթի և ԿԳՆ Երևանի երեխայի բժշկահոգեբանամանկավարժական կարիքի գնահատման կենտրոնի եզրակացության ու մարզպետարանի վկայագրման հիման վրա, 4 երեխայի ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում, 10-ը՝ սովորում են հատուկ դպրոցներում: Նշված երեխաներից 22-ի վկայագրումը կատարվել է 2013 թվականին: 2012 թվականին 5 հաշմանդամ երեխա անհատական վերականգնողական կուրս և բուժում է ստացել Ջերմուկի « Մոր ու մանկան » առողջարանում: Ուսումնասիրության արդյունքում մարզում գրանցվել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 227 երեխա, կատարվել է կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվական տվյալներն ընդգրկվել ՀՀ ԱՍՀ նախարարության « Մանուկ » տեղեկատվական կենտրոնում /32-ը 2013 թվականին./:

Մարզի տարածքում բնակվող տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 30 երեխաների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաստատվել է խնամակալություն և հոգաբարձություն: Վերջիննրս իրենց կարգավիճակին համապատասխան ստանում են սոցիալական աջակցություն, բնակարանի կարիք ունեցող 3 երեխաների կարիքը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ ԱՍՀ նախարարություն՝ հերթագրման և բավարարման համար:

2013 թվականին երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություն է ուղարկվել 8 երեխա, որից 6-ը՝ մանկատուն, 2-ը՝ գիշերօթիկ հաստատություն, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2 երեխա / Եղեգիս, Վայք /: 2013թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզից հանրապետության մանկատներում է գտնվում 16 երեխա: Այդ երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ ընտանիքում նրանց ապրելու և դաստիարակվելու հնարավորություն ստեղծելը համարվում է առաջնահերթություն:

Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են, օպերատիվ վիճակը բավարար է: Ոստիկանության տարածքային բաժինների ԱԳ խմբերում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման է վեցվել 8 անչափահաս, տարվում է համապատասխան աշխատանք նրանց գործողություններին որոշակի ուղվածություն տալու համար: Կանխվել է թափառաշրջիկության և մուրացիկության 2 դեպք, մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթական համակարգում:

Ծննդի պետական գրանցում չունեցող երեխաներ մարզում չկան: 2013 թվականին երեխա որդեգրելու համար դիմել են մարզի երկու բնակիչներ: Նրանց տրվել է մերժողական պատասխան ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 116 հոդվածի պահանջների հիմքերով:

Ընտանեկան բռնության, կանանց և երեխաների թրաֆիկինգի, անտեսման դեպքեր մարզում չեն գրանցվել, սակայն ավելի հաճախակի են դարձել ամուսնալուծության դեպքերը, որից ավելի շատ տուժում են երեխաները, որոնք գտնվելով ծնողներից մեկի մոտ լիարժեք դաստիարակություն չեն ստանում, քանի որ առանձին դեպքերում խախտվում է ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 54 և 56- րդ հոդվածների պահանջները, խոչնդոտվում երեխայից առանձին ապրող ծնողի իրավունքները երեխայի դաստիարակության հարցում:

Զգալի աշխատանքներ են կատարվել մարզի 44 համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների կանոնակարգման, մեթոդական օգնության ուղղությամբ:

2013 թվականին մարզի 6 համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին օգնելու նպատակով իրականացվեց մոնիտորինգ և արդյունքների քննարկում: Բաժնի և միջազգային կազմակերպությունների համագործակցության արդյունքում մարզի քաղաքային համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների բոլոր անդամներն անցել են վերապատրաստում: Համայնքային ԽՀՀ-ներին է տրամադրվել անհրաժեշտ մեթոդական գրականություն, կազմակերպվել սեմինար և ուսուցում:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել մարզում պետական գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ: Ստեղծվել է գենդերային հարցերով մշտական գործող հանձնաժողով, մարզի 13 համայնքներում կազմակերպվել հանդիպումներ, տրամադրվել է տեղեկատվական և քարոզչական նյութեր, 14 համայնքներում նշանակվել գենդերային հարցերով պատասխանատու անձ:

Բաժինը 2013 համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող միաջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ, մասնակցել նրանց կողմից կազմակերպված սեմինարներին, վերպատրաստման դասընթացներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կյոթ սեղանների անցկացմանը:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի
ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների

պաշտպանության բաժնի պետ՝

ՎԻսախանյան

16.01.2014թ